ԹԻՎ 14 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«17» հոկտեմբերի 2025թ.
ք. Էջմիածին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 19-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ «ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 16-ի համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններին մասնակցելու համար ներկայացված «Ազգային Առաջընթաց» կուսակցության 11.10.2025թ. դիմումը՝ Հայաստանի Հանրապետության թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմումատուի իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը

«Ազգային Առաջընթաց» կուսակցության դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 16-ի համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններին մասնակցելու համար՝ կից փաստաթղթերով, ստացվել է թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում 12.10.2025թ.:

Դիմումատուն 2025 թվականի հոկտեմբերի 15-ին ներկայացրել է ևս մեկ դիմում՝ հայտնելով ինքնաբացարկի մասին, և խնդրել է չգրանցել «Ազգային Առաջընթաց» կուսակցության ընտրական ցուցակը՝ այդպիսով հրաժարվելով իր՝ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 16-ի համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններին մասնակցելու համար ներկայացված դիմումից, ինչը դիմումատուի լիազոր ներկայացուցիչ Ռոբերտ Վահանի Ծովյանը հաստատեց թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 17.10.2025թ. նիստին:

2. Հայաստանի Հանրապետության թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ դիմումով

հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով՝ Հայաստանի Հանրապետության թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 16-ի համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններին մասնակցելու համար ներկայացված «Ազգային Առաջընթաց» կուսակցության 11.10.2025թ. դիմումով հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ **Գ. Նազարյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * ԸՆՏՐԱԿԱՆ ԽՆԱՄՔՈՎՈՒՄ ԸՀ N14